

Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ



Գետէն եկած  
իշխանը



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot; Lazarus

Adapted by: M. Maillot; Sarah S; Alastair Paterson

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1


Canada

©2021 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.



Վարչապետ Յովսեփ  
մահացաւ: Բոլոր  
Եգիպտոսը իր  
ընտանիքին  
հետ տիրեցան:



Աստուած գործածած  
Էր Յովսէփը այդ հրեան,  
որ իր երկիրը սովէ  
ազատէ:

Ան խոհեմ  
եւ սիրուած  
առաջնորդ  
մըն էր:  
Հիմա  
ան չկար:



Երեք հարիւր երկար տարիներ անցան: Յովսէփին ժողովուրդը, հրեաները հզօր աչք մը դարձած էին Եգիպտոսի մէջ, նոր փառաւորներ վախցաւ, որ հրեաները կրնան իր դէմը ելլել, անոր համար



անոնց գերի  
դարձուց:



Փառաւոնը վատօրէն վարուեցաւ հրեաներուն հետ:  
Անոնց ստիպեց, որ հզօր քաղաքներ կառուցեն:  
Սակայն որքան ինք անոնց աշխատանքով  
կը տառապեցնէր հրեայ գերիները  
շարունակեցին  
բազմանալ:



Օրին մէկը, փառաւորնը ցաւալի հրաման մը  
արձակեց. "Բոլոր նորածին հրեայ տղաքը Նեղոս  
գետը պիտի նետուին": Գէշ փառաւորնը որոշած էր  
հրեաներուն թիւը պակսեցնել: Ան  
մինչեւ մանուկները  
կ'ուզէր մեռցնել:




"Ի՞նչ կրնայինք ընել" ընտանիքը հարց տուաւ:  
Անոնք որոշեցին փոքրիկը Նեղոս գետին մէջ դնել:  
Ջուրի դէմ շինուած սակառի մը մէջ դրին փոքրիկը:






Շալկելով իր արժեքաւոր բեռը, պզտիկ սակառէ  
նաւակը կը ծփար եղեգներուն մէջ: Ի՞նչ կրնար  
պատահիլ փոքրիկ  
մանչուկին:



Ջեռուէն, մանուկին քոյրերը կը դիտէին արժեքաւոր սակառը, որ նրբօրէն կ'երթար եղեգներուն մէջէն:



Յանկարծ փառաւոնին աղչիկը եւ իր ծառաները  
գետ եկան լոգանք առնելու: Երբէք միջոց չկար,  
որ սակառը պահուի: Թերեւս  
կրնային անցնիլ առանց  
տեսնելու սակառը:



"Ո՛հ, սակառ մը: Հոն  
եղեգներուն մէջ: Արդեօք ի՞նչ  
կայ մէջը" Փառաւոնին աղջիկը  
հրամայեց, որ իր ծառաները  
բերեն սակառը: Երբ ան  
բացաւ, մանուկը սկսաւ  
լալ: "Այս հրեայի  
պզտիկ է", ըսաւ  
իշխանուհին  
զարմացած:



"Խեղճ մանուկ՝ դուն շատ գեղեցիկ ես": Թերեւս փառաւորնին աղջիկը կը խօսեր մանուկին հետ, ինչպէս ուրիշ չափահասեր կ'ընէին: Ան նաեւ կրնար ըսած ըլլալ հետեւեալը. "Ուչի-գուչի գու" անշուշտ իրենց լեզուով:



Աստուած պետք էր, որ մասնաւոր խելացութիւն տուած ըլլար մանուկին քրոջ: Ան փառաւոնին աղջկան քով վազեց: "Կ'ուզե՞ս քեզի համար հրեայ կին մը գտնեմ, որ հոգ տանի մանուկին քեզի համար":

"Այո՛, գտիր", եղաւ պատասխանը:

Որո՞ւ կը կարծէր աղջիկը վազեց բերելու:



"Մայրիկ, առագ եկուր, օ՛հ, աճապարէ",  
թերեւս աղջիկը ժամանակ չուներ  
բացատրելու:

Միասին,  
երկուքը  
վազելով  
ճամբէն  
վար  
եկան:




Գետին մօտ, փառաւորնին աղջիկը մանուկը  
գրկած էր: "Չոգ տար մանուկին ինձի  
համար: Ես քեզի կը վճարեմ:  
Անոր Մովսէս կոչէ:"  
Մովսէս կրնար  
եգիպտացի  
մկրտուած  
ըլլար:





Ուրեմն Մովսէս վերադարձաւ իր  
ընտանիքին եւ իր տունը: Անոնք  
անոր սորվեցուցին Աստուծոյ եւ  
հրեայ ժողովուրդը սիրել: Շուտով  
ան պիտի ապրէր  
փառաւոնին  
պալատին մէջ  
անոր աղջկան  
մօտ Աստուած,  
որ անոր կեանքը  
փրկեց, ապագայի  
մեծ ծրագիր մը  
ունէր մանուկ  
Մովսէսին  
համար:



Գետնն եկած իշխանը


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ելից 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130





Կերջ



9



60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուն համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

